ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սևան համայնք

16.05.2023թ.

2023թ. մայիսի 16-ին ժամը 11.00-ին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով /3-րդ ՀՀ կառավարության/ Գորիս Սոլուշնս» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարսեր, Լճաշեն, Գեղամավան համայնքների վարչական տարածքներում 110կՎ լարման մնող օդային գծի և 110/10կՎ լարման տրանսֆորմատորային ենթակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ երրորդ հանրային քննարկումը:

Հանրային քննարկմանը ներկա էին գործունեության իրականացման վարչական տարածքների՝ համայնքների ղեկավարները, Ջեռնարկոյի, «ՀԷՑ»ՓԲԸ-ի, Գեղարքունիքի մարզպետարանի ներկայացուցիչներ, բնակիչներ:

Ելույթ ունեցան՝

Սևան համայնքի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Մ. Մկրտչյանը, հանրային քննարկման մասնակիցներին ներկայացրեց քննարկման նպատակը, նշելով, որ սա երրորդ հանրային քննարկումն է նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Թ. Նուրիջանյանը՝ հաշվետվության մշակող «Նովալ»ՍՊԸ-ի ներկայացուցիչ, ներկայացրեց Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի վարչական տարածքում նախատեսվող 110կՎ լարման մնող օդային գծի և 110/10կՎ լարման տրանսֆորմատորային ենթակայանի կառուցման հետևանքով շրջակա միջավայրի բաղադրիչների՝ օդային ավազան, ջրային և հողային ռեսուրսների, կենսաբազմազանության, ինչպես նաև մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները՝ շինարարության և շահագործման փուլերում: Նշեց, որ հաշվետվությունում ներկայացված են վերջիններիս վրա հնարավոր ազդեցությունները, ազդեցության գնահատումները, դրանց կանխմանն ու մեղմմանն ուղղված բնապահպանական միջոցառումները: Հաշվետվությունում ներկայացվել է նաև գործունեության այլընտրանքային տարբերակը, սոցիալական խնդիրները, կարևորելով, որ օդային գծի ուղեգիծն անցնում է համայնքային նշանակության հողերով, հնարավորինս չառաջացնելով գյուղացիների սեփական հողատարածքների հետ հաղնկման խնդիրներ:

Նախատեսվող գործունեության նախագիծը ներկայացրեց Ջեռնարկոյի ներկայացուցիչ, նախագծող՝ Վահագն Թեպելիկյանը: Ներկայացրեց՝ նախատեսվող գործունեության տեխնիկական լուծումները՝ ենթակայանի և 27 հենակետերով ՕԳ-ի կառուցման ընթացակարգը: Նշեց, որ ՕԳ-ն կառուցվելու է ջերմոցային տնտեսության համար ենթակայանի տարածքը գտնվելու է Լճաշեն համայնքում, որի հողերի նպատակային նշանակությունը պետք է փոխվի: Իսկ օդային գծերն անցնելու են Վարսեր և Գեղամավան բնակավայրերի վարչական տարածքներով, չհատվելով գյուղացիներին պատկանող հողատարածքների հետ: Թղթային տարբերակով ներկայացրեց օդային գծի ուղեգիծը:

Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ներկայացուցիչ՝ Ս. Օհանյանը հարց բարձրացրեց՝ Վարսեր և Գեղամավան համայնքների տարածքներով օդային գծի անցման ուղու, գյուղացիների տեղեկացվածության հետ, նշելով որ անպայման հաշվի առնվի գյուղացիների շահերը:

Վ. Թեպելիկյանը պատասխանեց, որ տեղադրվելու է 27 հենարան, որից մեկը դրվելու է սեփական տարածքում, մնացածը՝ համայնքային հողերում: Նշեց, որ յուրաքանչյուր հենարանի տեղադրման ժամանակ, եթե առաջանա խնդիրներ, համընկնումներ, կտեղեկացվեն գյուղացիներին, կհամաձայնեցվեն: Պահպանվելու է անվտանգության գոտին՝ 20մ:

Մ. Մկրտչյանը նշեց, որ հենասյուների տարածքների հողատեսքերի նպատակային նշանակությունը կփոխվեն Էներգետիկայի: Նշելով, որ ձեռնարկողի կողմից պետք է նախատեսվեն որոշակի ֆինանսական միջոցներ՝ համայնքներում առաջացող խնդիրների լուծման համար:

Քննարկման մասնակիցները պահանջեցին, որ համայնքի հետ անպայման քննարկվի օդային գծի վերջնական տարբերակի ուղեգիծը, անվտանգության գոտու և գյուղացիներին պատկանող հողային տարածքների հետ համընկման հնարավորությունները:

Մ. Մկրտչյանը նշեց, որ հստակեցված ուղեգծերը կներկայացվեն և կհամաձայնեցվեն համայնքների և գյուղացիների հետ:

Մ. Մկրտչյանը եզրափակեց հանրային լսումը, նշելով որ համայնքը դեմ չէ գործունեության իրականացմանը, հաշվի առնելով բնակավայրերի բնակիչների կարծիքները: